

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրեան Հինգշաբթի օր Երևանի մէջ Սեւծովեան Տնտեսական Համագործակցութեան խորհրդարանական վեհաժողովի նախագահութեան «մուրճը» փոխանցեց Ազգային խորհրդարանի փոխ նախագահ Արթուր Ռախիմյանին: Այսպիսով, Ազգային կը ստանձնէ վեհաժողովին ժամանակաւոր նախագահութիւնը: Ա. Խաչատրեան Ռախիմյանին խնդրեց, որ իր անկեղծ շնորհակատութեամբ փոխանցէ ազգային խորհրդարանի իր պաշտօնակից Մուրթուկ Ալեքսեանին: Վեհաժողովին յաջորդ նիստը պիտի գումարուի 20-22 Յունիս 2001ին Պարուի մէջ:

ՄՈՐԱԹԻՆՈՍ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑԱԻ ՉՕՐ. ԼԱՀՈՒՏԻ, ՀԱՐԻՐԻԻ ԵՒ ՊԸՐՐԻԻ ՀԵՏ

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի հարցերու երոպական համայնքի յատուկ բանագնաց Միկել Անիէլ Մորաթինոս երէկ տեսակցութիւններ ունեցաւ Լիբանանի իշխանութեան երեք պետերուն հետ: Հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտ Մորաթինոսի վերահաստատեց, թէ Միջին Արեւելեան տագնապին լուծումը մը գտնելու եւ շրջանին մէջ կայունութիւն հաստատելու միակ ուղին արաբական բռնագրաւեալ հողերէն Իսրայէլի հեռացումն ու պաղեստինցի ժողովուրդի արդար իրաւունքներու ճանչումն է: Նախագահ Լահուտ նաեւ վերահաստատեց հարաւային Լիբանանի վիճակին առնչութեամբ Լիբանանի սկզբունքային կեցուածքը, ընդգծելով անհրաժեշտութիւնը վարկ տալու հարաւի եւ Լիբանանի միւս շրջաններուն երոպական օժանդակութեան: Մորաթինոս հանդիպումէն ետք ըսաւ, որ հանրապետութեան նախագահը կոչ ուղղած է երոպական Միութեան զօրավիճակ կանգնելու Լիբանանի տնտեսական բարեկարգումներուն եւ կարելի եղածին չափ շուտ գործարկելու Լիբանանի եւ Միութեան միջեւ բանակցութիւններէն ետք ստորագրուած համաձայնագիրները: Մորաթինոս ըսաւ, որ նախագահ Լահուտի բոլոր նկատողութիւնները պիտի փոխանցէ երոպական երկիրներու ղեկավարներուն եւ Միութեան կառոյցներուն, յատկապէս հարաւային Լիբանանի յաւելեալ օժանդակութիւններ ապահովելու նպատակով: Երջանային վիճակին եւ խաղաղութեան գործընթացի ապագային առնչութեամբ Մորաթինոսը ըսաւ: Շար.ը՝ էջ 10

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երէկ Հայկական Երեսփոխանական Պոռքի նիստին ընթացքին քննարկեց լիբանանեան քաղաքական բեմը յուլոյդ հարցերը, յատկապէս կանգ առնելով հետեւեալ կետերուն շուրջ: Ա. Պոռք բարձր գնահատանքով արձանագրեց ընդլայնուած կառավարական կազմերու մէջ երկրորդ նախարարով մը ներկայացուած ըլլալու հայ համայնքին արդար պահանջին շուրջ բոլոր կուսակցութիւններուն, քաղաքական ուժերուն, միութիւններուն եւ քաղաքական անձնատիրութիւններուն համախմբումը, շեշտելով, որ այս իրաւունքը նուիրագործուած է Թաֆէի համաձայնագրով, ինչպէս նաեւ ազգային համախորհրդեան փաստաթուղթին ծնունդ առած սահմանադրութեան 95րդ յօդուածին «Ա» պարբերութեամբ, որ կ'ըսուի. «Համայնքները արդարօրէն ներկայացուած կ'ըլլան նախարարութիւններու կազմութեան մէջ»: Բ. Պոռք նկատեց, որ նախարարաց խորհուրդին վերջին նիստին ընթացքին հանրապետութեան նախագահին եւ վարչապետին այս առնչութեամբ ունեցած դրական յստակ կեցուածքները կը հաստատեն կառավարական կազմերէն ներս արդար եւ սահմանադրութեան համապատասխան ներկայացուցչութիւն ունենալու հայ համայնքին իրաւունքը: Այս յայտարարութիւնները կը կատարուին հայկական ներկայացուցչութեան հարցին լուծումին տանող դրական կեցուածքներու ծիրին մէջ, որ այսուհետեւ եւ մինչեւ հարցին բաղձալի լուծումը մեր կողմէ պիտի դիմաւորուի անհրաժեշտ դրական քայլերով: Գ. Պոռք կը վերահաստատէ իր կեցուածքը, թէ ինք անհրաժեշտ կը նկատէ պահպանել հայ համայնքին իրաւունքները առանց իր պահանջները պայմանաւորելու այս կամ այն անունով: ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՊՈՐԻ

TROISIEME SESSION! RESULTATS ??? ANNEE SCOLAIRE RATEE ?? ACADEMIE SOTHYS D'ESTHETIQUE ELYSSAR SUIVEZ NOTRE PROGRAMME D'ESTHETIQUE / COSMETIQUE SPECIALEMENT CONCU POUR VOUS INSCRIPTION : JUSQU'AU 30/11/00 - TEL: 03 ET OU 04 414079 DIPLOME D'ETAT

ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ ԿԱԶԱՅԻ ԵՒ ԱՅՈՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ, ԲԱՅՑ ՈՉ ՆԱԽՈՐԴՈՂ ՕՐԵՐՈՒ ՏԱՐՈՂՈՒԹԵԱՄ

Ռամատանի առաջին Ուրբաթ օրուան հաւաքական աղօթքները աւարտեցան առանց արիւնալի մեծ միջադէպերու: Տասնեակ հազարաւոր պաղեստինցիներ մասնակցեցան Աքսայի աղօթքին: Իսրայէլեան ուժերը արտօնութիւն տուին պաղեստինցիներուն Աքսայ մտնելու: Երկու ամիսէ ի վեր իսրայէլեան ուժերը կ'արգիլէին 45 տարեկանէն վար պաղեստինցիներուն Աքսայ մուտքը կանխարգիլելու համար յաւելեալ բախումները, որոնք կրնան ծագիլ յատկապէս Ուրբաթ օրուան աղօթքին աւարտին:

Սովորական տարիներուն, մօտաւորապէս երկու հարիւր հազար իսրայէլեան Աքսայի մէջ կ'աղօթեն Ռամատանի չորս Ուրբաթ օրերուն: Երէկ սակայն Կապայէն եւ Այսրյոճան անէն մարդիկ չկրցան Երուսաղէմ մտնել, որովհետեւ Իսրայէլ փակած է այդ շրջանները եւ արգիլած պաղեստինցիներուն ելքն ու մուտքը: Կապայի եւ Այսրյոճանի մէջ միջադէպերը կը շարունակուին, սակայն ոչ նախորդ շաբաթներու տարողութեամբ: Իսրայէլացի պիստոլորներէ կ'արգիլուին վերադարձը: Շար.ը՝ էջ 2

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՔ ԶԵ ԱՅՆ ԽԱՐԿԱՆՔԸ ՈՒՆԵՆԱՅ, ԹԵ ԱԶՐՊԵՅՑԱՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ ՆՈՅՆԻՍԿ ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵԹՐ ԶՈՂ ԿՈՐԱՆՑՆԵԼ

Ազգային մէջ Ռուսիոյ դեսպան Նիկոլայ Ռիսակով Ազգային խորհրդի նախագահ Մաքար Ապիւեի հետ հանդիպումին ընթացքին յայտնեց, որ ժամանակը հասած է Կապալա ռատալի շուրջ իրաւական անորոշութիւնները լուծելու: Իր կարգին, Ապիւե ըսաւ, որ հայ-ազգային անվանական տագնապը եւ Կապալա ռատալի կարգավիճակը կարելի չէ լուծել առանց Ռուսիոյ: Ան մտահոգութիւն յայտնեց վարչապետին դուրս բերած զինուորական սարքերու Հայաստան եւ Լեւոնային Ղարաբաղ տեղափոխումին մասին: Ռուս ղեկավարը ըսաւ. «Մենք վեր կը դասենք Ազգային խորհրդի ամբողջական հողային ամբողջացումը»: Ապիւե նշեց, որ «Ռուս-սիոյ նախագահ Վլատիմիր Փութինի այցելութեանէն ետք մենք կը սպասենք պաշտպանութեան նախարար Իկոր Սերկէեի այցելութեան»: Շար.ը՝ էջ 10

ՍՈՒՐԻԱ ՅՈՐԵՆ ՊԻՏԻ ՏՐԱՄԱԴՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԵՐԵՒԱՆ, 1 (ԱՐՄԷՆՓՐԷՍ).- Դամասկոսի մէջ Հայաստանի դեսպան Լեւոն Սարգսեան Հինգշաբթի օր հանդիպում ունեցաւ Սուրիոյ վարչապետ Մոհամատ Մուսթաֆա Միրոյի հետ: Հանդիպումին քննարկուեցան հայկական յարաբերութիւններու զարգացման եւ միացեալ ձեռնարկութիւններու ստեղծման կարելիութիւններուն առնչուող հարցեր: Անոնք կարեւոր նկատեցին հայ-սուրիական միջկառավարական յանձնախումբի երկրորդ նիստի նախապատրաստական աշխատանքներու պատշաճ կազմակերպումը: Սուրիոյ վարչապետը վստահեցուց, որ Սուրիոյ կառավարութիւնը ընդառաջելով Հայաստանի կառավարութեան զինուորին, որոշած է Հայաստանին տրամադրել 10 հազար թոնն ցորեն եւ 500 թոնն դեղատնային սածիլ: ԸՍՏ ԹՈՒՐԸ ՆԱԽԱՐԱՐ ԳԻՒՐԷԼԻ

ՔՈԶԱՐԵԱՆ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԻ ԴՐԴԵԼ «ԱՐՄԱՏԱԿԱՆ» ՀԱՅԵՐԸ

Թուրքիոյ պետական նախարար Երեւոյ Սինա Գիւրէլի գնահատումով, Հայոց Յեղասպանութեան շուրջ ընթացող պնդումները կազմակերպուած ձեւով կը զրուին Արեւմտեան երկրներու օրակարգերուն վրայ: Ըստ «ԱՆԱտոլու» լրատու գործակալութեան, Թուրքիոյ պետական նախարարը խորհրդարանին մէջ ելոյթի մը ընթացքին յայտարարեց, թէ ինչպէս անցեալին, ներկայիս եւս որոշ ուժեր անտեղի մեղադրանքներով կ'ուզեն Թուրքիան աննպաստ վիճակի մէջ դնել: Գիւրէլի պնդումով, Ռուսիոյ Քոչարեանի իշխանութեան զրուստ պաշտպանութեան արտօնութեամբ աշխատանք տանիլ: Անոր համոզումով, Քոչարեան պիտի շարունակէ զրոյցը «արմատական» հայերը: «Հայաստան մտադրութիւն ունի զարգացնելու այս գործընթացը՝ Թուրքիան պահելով մշտական ճնշման տակ: Յեղասպանութեան պնդումներու ընդունման պարագային անոնք կրնան դնել տարածքային կամ նիւթական պահանջներ, մինչդեռ Թուրքիան որեւէ ժամանակ իր պատմութեան ընթացքին յանցանք չէ գործած մարդկութեան նկատմամբ», ըսաւ ան: Ըստ նախարարին, Թուրքիան արդէն իսկ բացած է Օսմանեան դարաշրջանի արխիւները եւ պահանջ կը դնէ, որ Դաշնակցութիւնը եւս բանայ սեփական իր արխիւները: Նշենք, որ Թուրքիան միայն մասնակիօրէն բացած է ակնարկուած արխիւները եւ զանոնք կը տրամադրէ միայն Թուրքիոյ մօտիկ պատմաբաններու: Շար.ը՝ էջ 10

ՔՈԶԱՐԵԱՆ - ԱԼԻԵԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ



Զոչարեան եւ Ալիեի Հայաստանի եւ Ազգային նախագահներ Ռուպէրթ Քոչարեան եւ Հայտար Ալիեի Չորեքշաբթի օր Միասնի մէջ Անկար Պետութիւններու Հասարակապետութեան անդամ երկիրներու ղեկավարներու վեհաժողովին ծիրէն ներս ունեցան հանդիպում մը, որմէ ետք տեղի մամուլի միացեալ ասուլիս մը: Ալիե յայտնեց, որ առանձնազորուցը պարզ հանդիպում մը չէր, այլ՝ Լեւոնային Ղարաբաղի տագնապի լուծման փորձ մը: Իր կարգին, նախագահ Քոչարեան ըսաւ, որ հանդիպումին ընթացքին համաձայնութիւն գոյացած է բանակցութիւններու այլ տարազի մասին, որ կ'ենթադրէ աւելի աշխուժ շփումներ: Նախագահ Քոչարեանի համաձայն պէտք է նկատի առնուին երկու հանրապետութիւններու ապագայ զարգացումները: 2003ին Հայաստանի մէջ տեղի պիտի ունենան նախագահական ընտրութիւններ եւ նոյնը կը սպասուի Ազգային մէջ, ըսաւ ան աւելցնելով, որ մինչեւ այդ ընտրութիւնները տարակալին լուծման ուղղուած բանակցութիւնները պէտք է որոշ արդիւնքի մը հասած ըլլան, այսպէս՝ հարցը ներքին քաղաքական շահարկումներու ենթարկուելով կրնայ ընտրապայքարի գործիք դառնալ, որ անթոյլատրելի է: Քոչարեանի եւ Ալիեի համաձայն 2001ը պիտի ըլլայ անկրկնադարձային տարի: Շար.ը՝ էջ 10

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ՀԱՅԱՆՈՑ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՆԱՄԵԿԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ «ԱԶԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ Պատմական - վկայակոչական բնոյթի գիրք մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր գնահատական երեսներով: 416 էջ, 11 զուլա՛ն ● Ազգային եւ քաղաքական փորձառութիւններ ● Արժեւորումներ ● Պատմութեան համար ● Վկայութիւններ եւ վերջնական ● Ուղեւոր կը յիշենք... ● Յիշատակելիները ● Հ.Յ.Դ.Ի եւ հայութեան դէմ ոճիրներ ● Հայրենական արձագանգներ ● Սփիւռքեան արձագանգներ ● Հին օրերու վկայութիւններ նոր օրերու համար ● Թիւրքիոյ աշխատանքները Ստանալ «Ալկոլակ»ի ցուցիչներէն կամ հետեւեալ գրախանութիւններէն. «Համազգային», «Նարեկացի», «Ոսկեղար», «Ուրֆայան», «Obelix» եւ «Կոմիտաս»: Սակ՝ 15,000 ռ.:

ԱՒՍՏԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԻՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԵՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՑԻ

Աւստրիոյ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէնը՝ Ալֆրէտ Բոնիս Լիբանան կ'այցելէ, բացուի կատարելու համար Պէյրութի մէջ իր երկրին դեսպանատան նոր կեդրոնատեղիին:

Աւստրիացի պաշտօնատարը երէկ այցելեց հանրապետութեան նախագահ Կոր. Էմիլ Լախուտի, ան յայտարարեց, որ քննարկած են շրջանի ընդհանուր վիճակն ու խաղաղութեան գործընթացի հարցերը:

«Անհրաժեշտ է, որ այս գործընթացը յառաջ դիմութիւն արձանագրէ բանակցութիւններու միջոցաւ, որովհետեւ վայրագութիւնը նման հարցերու լուծման ճիշդ ճեղք է», ըսաւ ան:

Ռոհան յոյս յայտնեց, որ Եւրոպական Միութիւնը Միջին Արեւելքի հարցերու յատուկ բանագնաց Միկել Անիէլ Մորաթինոսի միջոցաւ կը յաջողի օժանդակել բանակցութիւններու վերակումը ապահովելու համար տարուող աշխատանքներն:

Ռոհան երէկ այցելեց նաեւ արտաքին գործոց նախարար Մահմուտ Համուտի եւ անոր հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւններն ու անոնց վարգսման միջոցները, ինչպէս նաեւ խաղաղութեան գործընթացին դիմագրաւած հարցերը:

ԵՐԵՍՓՈՒՍԱՆՆԵՐ ՊՈՒԷՅՁ ԵՒ ԽԱԶՆ ԸՅՅԵԼԵՑԻՆ ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Վերջին օրերուն Գամակոս այցելած է Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի հետ տեսակցած երեսփոխաններ Ֆարէս Պուէյլ եւ Ֆարիտ Խալէ երէկ այցելեցին մարոնիներու Մար Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքին եւ անոր ներկայացուցիչ իրենց ունեցած հանդիպումներուն արդիւնքները:

Պուէյլ յայտարարեց, որ ինք ոչ մէկ նախաձեռնում է ստանձնած է, որովհետեւ միակ նախաձեռնողը պէտք է ըլլայ պետութիւնը:

ՇԷՅՆ ՔԱՊԱԼԱՆԻ ԿՈՉԸ՝ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒՆ

Շիիններու Գերագոյն խորհուրդի փոխ նախագահ շէյխ Ապտէլ Ամիր Քապալան երէկ արտասանած իր քարոզին մէջ կոչ ուղղեց բոլոր լիբանանցիներուն՝ համախմբուելու պետութեան շուրջ եւ անոր շահը գերադասելու համար ինչպէս յարգելու, հատուածական եւ քաղաքական նեղ շահերէն:

«Կայ սուրիական կողմ մը, որ «բաց» է այս հարցերուն առջեւ, եւ կայ ականջները փակած կողմ մը», ըսաւ Պուէյլ:

Երեսփոխան Խալէն ըսաւ, որ Սուրիոյ նախագահին հետ իր ունեցած հանդիպումը պէտք է տեսնել լիբանանեւտուրիական փոխադարձ պարկոյտութիւնը անբարեկարգութիւնը անբարեկարգելու շուրջ անհրաժեշտ է դիմագրաւելու յաջորդ հանգրուանի մարտահրաւերները:

ՔԱՆԻ ՄԵ ՏՈՂՈՎ

ՔՅԱՐՇՈՒՊԱՅԻ եւ Ռուսիայի Սամաքայի բարձունքներուն վրայ դիրքեր գրաւած իսրայէլացի զինուորները երէկ կրակ բացին սահմանին լիբանանեան կողմը այցելող թղթակիցներուն վրայ: Չոկ կամ վիրատու չկայ:

Սուրիոյ նախագահը լիբանանեան բեմին վերաբերող բոլոր հարցերուն մասին դրական արտայայտուած է», յայտարարեց Խալէն:

Այգային լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ ղէպը պատահած է, երբ մամլոյ լուսանկարիչներ կը նկարէին Ռուսիայի Սամաքայի իսրայէլեան դիրքին մօտ բանող երկու պուլտուրներ: Դէպքը պատահած է Տիւրքիոյ հնդկական ուժերուն ներկայութեան:

«Պետութիւնը պէտք է նախանձախնդրութիւն մը կատարէ Պրըքիէի ուղղութեամբ», ըսաւ ան, լաւատեսութիւն յայտնելով սուրիական ուժերու վերադասուողութիւնը եւ երկու երկիրներու յարաբերութեանց սրբագրութեան առնչութեամբ:

Շէյխ Քաուրը հաւատեց, որ Հրպալլա ճիգ պիտի չլինայ ապահովելու գերիներու ապատարձակումը եւ ապտագրելու բռնագրաւեալ շրջանները:

«Ռոյթըրս», որ հաղորդեց լուրը, ըսաւ, թէ «իսրայէլեան ապահովութեան աղբիւր» յոյս յայտնած է, թէ Սուրիոյ ուղղութեամբ պատգամը արդիւնաւէտ կ'ըլլայ եւ անհիկա կ'արգիլէ Հրպալլայի գործողութիւնները:

«Մենք զինուորական կարողութիւնը ունինք վնաս հասցնելու Լիբանանի մէջ գտնուող սուրիական ուժերուն եւ կրնանք ստեղծել այնպիսի պատերազմ մը, որ ոչ մէկը կ'ունի մղել», ըսած է նոյն աղբիւրը:

«Մենք զինուորական կարողութիւնը ունինք վնաս հասցնելու Լիբանանի մէջ գտնուող սուրիական ուժերուն եւ կրնանք ստեղծել այնպիսի պատերազմ մը, որ ոչ մէկը կ'ունի մղել», ըսած է նոյն աղբիւրը:

ԴՐԱՄԱՀԱՒԱՔԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԻ

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի թելեթոն-դրամահաւաքի արշարձակները կազմակերպուած Արցախի հիւսիս-արարւ ճանապարհին կառուցապատման եւ Աղէտի Գօտիի վերակառուցման աշխատանքներուն համար, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ Հինգշաբթի, 23 Նոյեմբեր 2000ին, Մ. Նահանգներու եւ Եւրոպայի մէջ: Նոյն նպատակին համար Հիմնադրամի Լիբանանի Յանձնաժողովի կազմակերպած արշարձակ, նոյն օրու մէջ, ընթացաւ յաջողութեամբ, եւ պիտի շարունակուի մինչեւ Ծաբաթ, 2 Դեկտեմբեր 2000:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

- 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2000 ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԿՈՄԻՏԵԱՍ ՄԱՍՆԱՃԻԴ
- ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ Հ. Մ. Ը. Մ. Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 27 ՅՈՒՆՈՒՄԱՐ 2001

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԵԾԻ ՏԻԿԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆԻ Կազմակերպութեամբ ԱՄԱՆՈՐԻ ՊԱԶԱՐ - ԾԱԾ Բանջարեղէնի եւ Պտուղներու յարդարում (carving) BLUE ELEPHANT RESTAURANT- ի Շեֆ ՎԻԼԻ-Ի կողմէ (Thailand-է) Աշակերտական յայտագիր

Տեղի կ'ունենայ Ուրբաթ 8 Դեկտեմբեր 2000, կ.ա. ժամը 10:00ից, Հայ Աւետ. Ա. Եկեղեցւոյ Բանդիսարարից մէջ, Մեքսիկոյ կողմը:

ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԶԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ...

Շարունակուած Ա. ԷջԸԸ նորածին մը վիրատուրելով: Միջադէպը տեղի ունեցած է Բեթլեհէմի մօտ: Այլ շրջանի մը մէջ վիրատուած են երկու զինուորներ:

Պարաք դիտել տուաւ, որ ինք տակաւին կը հատայ ի յոյս ունի, որ պաղեստինցիներուն հետ կարելի պիտի ըլլայ համաձայնագիր մը ստորագրել եւ հաւանական է օժանդակել իսրայէլեան զինուորին:

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը հովանաւորող Միացեալ Նահանգներ նախընտրեցին հակադարձութիւն չունենալ Պարաքի առաջարկած ծրագիրին մասին, վերստին շեշտելով, որ պիտի շարունակեն օժանդակել երկու կողմերուն, որպէսզի խաղաղութիւն հաստատեն շրջանին մէջ:

Արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարը ըսաւ, որ Ռաշինկոյն կը նախընտրէ խաղաղութեան համաձայնագիր մը, որ լուծում կ'ապահովէ բոլոր հարցերուն, որոնց շուրջ տարակարծիք են պաղեստինցիներն ու իսրայէլացիները: Ան աւելցուց, որ Ռաշինկոյն պատրաստ է զօրավիճ կանգնելու որեւէ համաձայնագրի, որ ընդունելի է պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն համար:

Պարաք զիտել տուաւ, որ ինք տակաւին կը հատայ ի յոյս ունի, որ պաղեստինցիներուն հետ կարելի պիտի ըլլայ համաձայնագիր մը ստորագրել եւ հաւանական է օժանդակել իսրայէլեան զինուորին:

Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը հովանաւորող Միացեալ Նահանգներ նախընտրեցին հակադարձութիւն չունենալ Պարաքի առաջարկած ծրագիրին մասին, վերստին շեշտելով, որ պիտի շարունակեն օժանդակել երկու կողմերուն, որպէսզի խաղաղութիւն հաստատեն շրջանին մէջ:

Արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան մէկ պաշտօնատարը ըսաւ, որ Ռաշինկոյն կը նախընտրէ խաղաղութեան համաձայնագիր մը, որ լուծում կ'ապահովէ բոլոր հարցերուն, որոնց շուրջ տարակարծիք են պաղեստինցիներն ու իսրայէլացիները: Ան աւելցուց, որ Ռաշինկոյն պատրաստ է զօրավիճ կանգնելու որեւէ համաձայնագրի, որ ընդունելի է պաղեստինցիներուն եւ իսրայէլացիներուն համար:

Կապել բանակցութեան սեղան շվեյցարական: ՊԱՐԱՄԱԿԱՆ Լիկայի աղբիւրներ հաղորդեցին, որ արաբական երկիրներու արտաքին գործոց նախարարները Դեկտեմբեր 1ին հանդիպում մը պիտի ունենան Գամակոսի մէջ, քննարկելու համար պաղեստինեւիսրայէլեան արհեստի բախումներն ու խաղաղարար ճիգերը:

Ս. ՅԱԿՈՐ ԵԿԵՂԵՑԻ ԵՆՐԵՅԻԷ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
Ս. Յակոբի տօնին առիթով երգ - նուագ - ասմունք - պար Հովանաւորութեամբ՝
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)
Կազմակերպութեամբ՝ Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդին Մասնակցութեամբ՝ Լիբանանահայ արուեստագէտներու Տեղի կ'ունենայ Ծաբաթ, 9 Դեկտեմբեր 2000ի երեկոյեան ժամը 8:00ին, «Տիրան Պապիկեան» սրահին մէջ: ՄՈՒՏՔ՝ 5000 Լ. ՈՍԿԻ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՆՄԲՈՒՄ
163 Դասախօս՝ ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ԾԱՀԻՆԵԱՆ Նիւթ՝ Զրոյց Վահէ Օշականի մասին Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր 2000, ժամը 7:00ին:
164 Դասախօս՝ ՊՐՆ. ԱՐՄԵՆ ՊԱԼԵԱՆ Նիւթ՝ Հայկական Յեղասպանութիւնն ու ամերիկեան քաղաքականութիւնը Երկուշաբթի, 11 Դեկտեմբեր 2000, ժամը 7:00ին:
165 Դասախօս՝ ՊՐՆ. ՎԱՐՈՒԹԱՆ ՍԵԹԵԱՆ Նիւթ՝ Լուսանկարչական Արուեստը Երկուշաբթի, 18 Դեկտեմբեր 2000, ժամը 7:00ին:
- Հանդիպումները տեղի կ'ունենան Garden Tower պանդոկին մէջ: - Հեռաձայն՝ 04-417741 www.gardentowerhotel.com/mondayforum

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԾՐԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԾԱՀԱՆԴՈՒԻՄՏԻ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՒ ՊԱՐԳԵՒՍՐՈՒՄԻ ԵՐԵՎՈՅ
Նախագահութեամբ՝ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱԶԵՐԵԱՆԻ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)
Տեղի կ'ունենայ Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր 2000, երեկոյեան ժամը 8:30ին, Յ. Տեր Սեւոյնեան սրահին մէջ: ԵՐԱԿԵՐ

ԲԱՒԱՍՈՒՆՔԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ
Ի յիշատակ ԳԵՐ. Հ. ԳԵՆՐԳ ՎՐԳ. ԱԲԳԱՐԵԱՆԻ (1934-2000)
Կը նախագահէ ԳԵՐ. Հ. ՎԱՐԴԱՆ ԵՊՍ. ԱԵԳԱՐԵԱՆ Կը պատարագէ ԳԵՐ. Հ. ՊՕՂՈՍ ԱԲԲԱՅ ԳՈՃԱՆԵԱՆ Կը քարոզէ ԳԵՐ. Հ. ՄԵՍՐՈՂ ՎՐԳ. ԹՈՓԱԼԵԱՆ
Կիրակի, 3 Դեկտեմբեր 2000, ժամը 11:00ին, Ս. Աստուածածին, Մխիթարեան երկրորդական վարժարան, Հայմիկ:
Ս. Արարողութեան աւարտին՝ Մխիթարեան հայրերը կ'ընդունին ցաւակցութիւնները դպրոցի դահլիճին մէջ:
ՄԽԻԹԱՐԵԱՆ ԵՐԿՐԳ. ՎԱՐԺԱՐԵԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ՀԱՉՄԻԷ

ԱՏՎԻԼ
ՀԻՒԱՆ ԴԱՆՈՑԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ԾԱՌԱՅԵԼԸ ՄԵՐ ՄԿԶԲՈՒՆՔՆ Է
1500 ԱՆԴԱՍ
100000\$
ՇԻՒԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ
90 ՇԻՒԱՆԴԱՆՈՑՆԵՐ
76 ՏԱՐԱԼՈՒԹԱՐԱՆԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ
ԱՏՎԻԼ - ԱՅԵՏԻ ԶԵՆ, Բ. ՅԱՐԳ ԵՌՈ. 01/262231 - 01/2425567

ԹՈՒՐԻՍԻԱ

ՄԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՆՈՐ ԱՆԿՈՒՄՆԵՐ

Թուրքիոյ մէջ դրամատանային տոկոսները երկ հապար առ հարիւրէն անդին անցան եւ սակարանային շուկաները 8 առ հարիւրի նոր անկում մը արձանագրեցին, մինչ Գ. Մ. Ֆոնտը կը պատրաստուէր Երկուշաբթի օր բանակցութիւններու ձեռնարկելու՝ նոր փոխառութիւններու գծով:

Կեդրոնական Դրամատան կենսական հանդիսացող տոկոսները 1133,52 առ հարիւրի բարձրացած են, մինչ մէկ օրուան մէջ դրամական շուկաներուն մէջ փոխ առնուած դրամի տոկոսը աւելի քան կրկնապատկուած է, բարձրանալով 950 առ հարիւրի:

Դրամատանները փորձած են թղթադրամ ապահովել Կեդրոնական Դրամատան՝ անոնց ֆոնտերու յատկացումը դադարեցնելէ ետք, Գ. Մ. Ֆոնտին ճշդած սահմաններուն հասնելու համար, անկէ նոր գումարներ ձեռք ձգելու նպատակով: Սակայն հապարաւոր թուրքեր Գ. Մ. Ֆոնտին դէմ ցոյցեր կատարեցին:

Դրամատաններու պատասխանատուներ կ'ըսեն, թէ Թուրքիոյ շուրջ 80 դրամատուներուն մէկ փոքր համեմատութիւնը այլեւս միմիայն կեդրոնական Դրամատան հետ կրնան առեւտուր ընել: Դրամատանային տագնապներու գծով մտավախութիւններ ցնցած են միջդրամատանային վտահոտութիւնը եւ վարկերու «խողովակները խլած»:

Դրամատանային դրութեան մաքրագործում մը եւ անոր հետեւած ուստիկանութեան կողմէ հետաքննութիւններ կարգ մը դրամատուներու շուրջ, մտավախութիւններու դուր բացած են, թէ անկախութիւնը թափ պիտի ստանայ, տոկոսները չափապահ բարձրացնելով եւ սակարանային շուկաները հարուածելով:

Մեկնաբաններ կ'ըսեն, թէ Գ. Մ. Ֆոնտին կողմէ շուտափոյթ քայլեր անհրաժեշտ են շուկաներուն հանդէպ վտահոտութիւնը վերահաստատելու համար:

Սակայն տասնեակ հապարաւոր թուրքեր երկէ գործադուլ եւ բողոքի ցոյց կատարած են անգործութեան, ցած անասկաններու եւ ընկերային ապահովութեան կրճատումներու դէմ, զորս շատեր կը նկատեն Գ. Մ. Ֆոնտին պօրակցութիւնը վայելող հակաաղաձ օրագիրի մը ծառայութիւնը:

Ցուցարարները քննադատեցին կառավարութիւնը, սակայն վայրոյթը մեծ էր նաեւ ֆոնտին դէմ:

Գ. Մ. Ֆոնտը Հինգշաբթի օր յայտնած է, թէ պատուիրակութիւն մը պիտի դրկէ Անգարա շաբաթավերջին՝ ստիպողական կացութեան մը ստիպով փոխառութիւն կատարելու հարցը քննարկելու համար: Անցեալ շաբաթակիւրբէն ի վեր սակարանային շուկաները աւելի քան 30 առ հարիւրի անկում մը արձանագրած են:

Ցոյցերը կազմակերպուած են էլեմտական տագնապին ծայր տալէն առաջ: Անգարայի մէջ ցուցարարներուն թիւր 30 հապարի հասած է:

Սենտիքաներ խոստացած էին երկիրը անդամաւորել, սակայն կը թուի, թէ ցոյցի կոչին ապրիլէն համեմատաբար փոքր եղած է Պոլսոյ եւ Անգարայի մէջ: Այլ ցոյցեր տեղի ունեցած են աւելի փոքր քաղաքներու մէջ:

Ըստ Էն. Թի. Վի. կայանին, ուստիկանութիւնը երկրի տարածքին ցոյց կատարող շուրջ 400 ուսուցիչ ձեռքբալիւմ է:

Թրքական օրէնքները կ'արգիլեն պետական պաշտօնեաներու գործադուլի դիմելէ: Այս օրէնքները խախտող պաշտօնեաները կրնան չորս ամիսէն մէկ տարուան բանտարկութեան ենթարկուիլ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՆ ԼԱՅՆԱԾԻՐ ԱՐՇԱԲԻ ԿԸ ԴԻՍԷ ԹՍՐԵՑՈՒՑԻՉԻ ՄԱՔՍԱՆԵՆԳՆԵՐՈՒ ԴԷՍ

ԹԻՖԼԻՍ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրանի Յեղափոխական պահակազուտի փնտրութիւնը թմրեցուցիչի քսան աֆյան մաքսաներգներ սպանած եւ տասնեակ մը ուրիշներ ձերբակալած են երկօրեայ լայնածիր արշաւի մը ընթացքին, հաղորդեց պատկերափոխ կայանը Ռեքսոս օր:

Չինուորները ներխուժած են նաեւ սահմանամերձ լեռնային շրջաններու մէջ թաքտոցներ, ուրկէ ապստաղած են վեց պատանդներ, որոնք իրանցի գիղացիներ են՝ առեւտրային մաքսաներգներու կողմէ:

Հրապարակուած տեղեկութիւններուն համաձայն, սպանուածներուն կարգին են թմրեցուցիչի մաքսաներգործեան ցանցեր վարող «Իշխաններ»:

Իրան տարանցում կարեւոր կեդրոն մը կը նկատուի Աֆղանիստանէն եւ Փաքիստանէն դէպի Եւրոպա եւ Օտտոմանական երկիրներ կատարուող թմրեցուցիչի մաքսաներգութեան համար:

ԻՐԱՔ ԱՌԿԱՆԵՑ ԲԱՐԻՂԻ ԱՐՏԱԾՈՒՄԸ

Իրաք երէկ առկա- խեց քարիղի արտա- ծումը, պատճառ դառ- նալով, որ միջապա- յին շուկայի վրայ սա- կերը բարձրանաւ: Իրաք առկախումի որոշումը տուաւ, որովհետեւ ՄԱԿ չէր արտօնած իսուն սէն- թի յաւելումի պահան- ջը: Իրաք ՄԱԿի քա- ռիղի փոխարէն սննդեղէն ծրագիրին ծիրէն դուրս յաւելում մը պահանջած էր, որ- պէսպի այդ յաւելեալ եկամուտը ուղղակի Պաղտատի սեփակա- նութիւնը դառնայ:

Թրքական ձէյհան եւ իրաքեան Միւս Պաքըր նաւահան- գիստներուն մէջ խա- ռիսի նետած քարի- ղատարները երէկ պա- րապ մնացին, որովհե- տեւ քարիղի չհասաւ: ՄԱԿի ծրագիրին հի- ման վրայ, Իրաք յիշ- եալ երկու նաւահան- գիստներուն ճամբով քարիղ կ'արտածէ: Թուրքիա հաստատեց, որ Քերքուքին արտա- ծուող քարիղի մղումը դադարեցուցած է:

Իրաք օրական 2,3 միլիոն տակառ քա- ռիղ կ'արտածէ: Անոր արտածումը կը կազմէ 5 առ հարիւրը քարի- ղի միջապային առեւ- տուրին: Արտածումին առկախումը նոր դժուարութիւններ պի- տի ստեղծէ շուկային մէջ, ուր երէկ արդէն իսկ յաւելում արձա- նագրեցին սակերը:

Յաւելումը 28-50 սէն- թի միջեւ էր տակառի վրայ:

Քարիղ արտադրող երկիրներ պատրաս- տակամութիւն յայտ- նած էին բաւարարելու շուկային կարիքները, եթէ Իրաք առկախէ արտածումը:

Իրաք կը մեղադրէ ՄԱԿը, դիտել տալով, որ անոր մերժողական կեցուածքը պատճա- ռած է տագնապը: Քա- ռիղի նախարարութե- նէն բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնեց, որ Իրաք հաստատ պիտի մնայ իր կեցուածքին վրայ: Ան աւելցուց, որ Իրաք կ'ուզէ տիպիկ մը ձեռնարկել քարիղի փոխարէն սննդեղէն ծրագիրին գործադ- րութեան հսկող խոր- հուրդին հետ, որպէս- չի պայն համոզէ ըն- դունելու համար իրաքեան պահանջը: ՄԱԿ կը մերժէ Իրաքի պահանջը, շեշտելով, որ քարիղի արտած- ման անորոշ եկամու- տը պէտք է փոխանցը- լի ՄԱԿի հաստատած դրամատան մը: ՄԱԿի պատժամիջոցներու յանձնախումբն է, որ կը վաւերացնէ մար- դասիրական ծրագիր- ները, որոնց համար կ'օգտագործուին քա- ռիղի վաճառքէն գո- յացած գումարները:

ԻՐԱՔ – ՍՈՒՐԻԱ ԿԱՊԵՐՈՒ ԲԱՐԵԼԱՌՈՒՄ

Իրաքի փոխ վարչա- պետ Թարէք Ալիյ Մոսկուայէն վերա- դարձին, Գամսակոսի

ԱԼՎԱՐՕ ՏԷ ՍՈԹՕ ԼԱԻԱՏԵՍՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԵ ԿԻՊՐՈՍԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԵԱՆՅ ԳԾՈՎ

ՄԱԿի յատուկ պատուիրակ Ալվարո տէ Սոթօ լաւատեսութիւն յայտնած է, թէ Կիպրոսի երկու կողմերը Յունուարին պիտի մասնակցին կրղ- պիին վերամիացման գծով բանակցութեանց ճորձանքին:

Տէ Սոթօ, որ Հինգշաբթի օր տեսակցութիւն մը ունեցած է Յունաստանի արտաքին գործոց նա- խարար Ճորձ Փափանտրէտի հետ, Աթէնքի մէջ յայտնած է, որ ՄԱԿ կը շարունակէ յուսալ, թէ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տէնքթաշ պի- տի մասնակցի յաւելեալ բանակցութիւններու, հակառակ անոր որ վերջերս ան պանոթ նկա- րագրած է իրեն «ժամանակի կորուստ»:

Ան ըսած է, թէ Տէնքթաշ ժընեի մէջ խոստա- ցած է, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղարին բա- նակցութեանց գծով հրաւերին գնահատումը պիտի կատարէ եւ «կը յուսամ այս հարցը հետը քննարկել, երբ Կիպրոս այցելեմ»:

Տէ Սոթօ Թուրքիա այցելութենէ մը ետք, Եր- կուշաբթի եւ Երեքշաբթի օրերուն Կիպրոս պի- տի այցելէ:

ՄԱԿ հովանաւորած է շաբթ մը անուղղակի բանակցութիւններ՝ երկու համայնքներուն ղե- կավարներուն միջեւ: Տէնքթաշ եւ Կիպրոսի նա- խագահ Կիպրոս Բլեթիտէ ՄԱԿի բանագնաց- ներուն միջոցով բանակցած են, առանց դէմ դի- մաց նստելու:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՄԱՆՏԵԼԱ ՍԻՏԱՅԻ ԴԷՍ ՊԱՅՔԱՐԻ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ

ԼՈՆՏՈՆ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).- Հարաւային Աֆրի- կէի նախկին նախագահ Նելսոն Մանտելա Սի- ՏԱՅԻ համաշխարհային օրուան առիթով կը ղ ուղղեց նախագուշական միջոցառումներու դիմել, կախարահիւրու համար այդ հիւանդու- թեամբ վարակումը:

Աշխարհի որեւէ անկիւն վերծ չէ մնացած հիւանդութենէն, որ նկարագրուած է իրեն մեր ժամանակներու առողջապահական ամէնէն աղէտայի տագնապը:

Աշխարհի տարածքին 36 միլիոն մարդ ծա- հրը կը կրէ, իսկ անցեալ տարի միայն շուրջ 5,3 միլիոն նոր վարակումներ արձանագրուած են:

Հարաւային Աֆրիկէ ՍիՏԱՅԻ բարձր եւ աճ արձանագրող համեմատութիւններ ունի: Հիւանդութիւնը արդէն անոր բնակչութեան 10էն մէկը վաճառած է:

Այլ երկիրներ կրնան մօտ տեսնէն համաճա- րակ դիմագրաւել:

ՄԱԿ կ'ըսէ, թէ Չինաստան այդ ճամբուն վրայ կը գտնուի եւ եթէ վճռակամ քայլերու չընէ, 2010ին կրնայ 10 միլիոն պարագայ ունենայ:

ԱՁԳՊԵՅԾԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱԼՎԻՍ ԿՐՆԱՅ ՃԱՆՉՅԱԾ ԸԼԼԱԼ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐԸ

ՊԱՔՈՒ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).- Ազրպէյճանի մէջ սպանուած ամերիկացի ձոն Ալվիս կրնայ Վինք սպանողը ճանչցած ըլլալ, յայտնած է Ռեքսոս օր Պաքուի ուստիկանութիւնը:

Ապահովութեան համար պետեղուած նկար- չական մքեքնայի մը արձանագրած ժապաւէնը ցոյց տուած է, որ իր տան մէջ սպանուած ձոն Ալվիս առաւօտեան այցելուի մը դուրը բացած է:

Աւելի ուշ տեղի ունեցած բախումին, Ալվիս ծանր վերքեր ստացած է եւ արիւնահոսութեան հետեւանքով մահացած է:

Ալվիս ամերիկեան ոչ կառավարական Հան- րապետական Միջապային Հիմնարկին Ազր- պէյճանի մասնաճիւղին տնօրէնը եղած է:

Հիմնարկը, որուն կեդրոնը Ռաշինկըրն է, կը քաջայերէ ժողովրդավարութիւնը, հսկելով ընտրութիւններու, մարզելով ընդդիմադրու- թիւն հանդիսացող եւ իշխող քաղաքական կու- սակցութիւնները՝ կազմակերպումի աշխա- տանքներուն:

Ալվիս Վրաստանի եւ Ազրպէյճանի մէջ աշխա- տած է:

ԱՌԵԻԱՆԳՈՒԱԾ 2 ՍՊԱՆԱՅԻՆԵՐՈՒՆ ՀԱՐՅԻՆ ՇՈՒՐՋ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԹԻՖԼԻՍ, 1 (ՌՈՅԹԸՐԸ).- Վրաստանի մէջ սպանացի 2 գոր- ծարարներու առեւան- գումին համար օգտա- գործուած ինքնաշար- ժը գտնուած է լեռնա- յին շրջանի մը մէջ: Անոր յառաջամասի ապակին կորուսած է եւ ինքնաշարժին մէջ արեան հետքեր գտնուած են, յայտնած է դատախազ մը Ռեք- սոս օր:

Վրացական – սպա- նական միացեալ գոր- ծառնութիւն մը հան- դիսացող տախտակի ընկերութեան մը մէջ աշխատող Անթոնիօ Թրեւիսօ եւ Ֆրանսիս- քօ Ռոտրիկէյ Հինգ- շաբթի առաւօտուն չորս անձերու կողմէ առեւանգուած են, մինչ Թիֆլիսի օդակա-

յանը կ'ուղղուէին տեղույն երթեւեկին հսկող ուստիկանապե- տին ընկերակցու- թեամբ:

Ուստիկան մը յայտ- նած է, որ առեւանգող- ներէն երկուքը վրացե- ռէն կը խօսէր եւ 2 ու- ռիշներ կովկասեան այլ լեզու մը՝ հաւանա- բար չէէնէրէն:

Դատախազը յայտ- նած է, որ գողցուած ինքնաշարժը գտնուած է հիւսիսարեւելեան Վրաստանի Անիթի շրջանին մէջ՝ Չէչէ- նիոյ մօտ:

Ան հաւանական նկատած է, որ երկու մարդիկը հաւանաբար փոխադրուած են հո- յովիտ, որ սահմանէն անդին դէպի Չէչէնիա կ'առաջնորդէ: Անիթի շրջանը Չէ-

չենիայէն խոյս տուած մեծ թիւով գաղթական- ներ ընդունած է: Շրջանին մէջ ոճիրնե- րու համեմատութիւն- ները մեծ աճ արձա- նագրած են:

Ռուսական «Ինթըր- ֆաքս» լրատու գործա- կալութիւնը հաղոր- դած է, թէ շրջանին բնակիչները դէպի հո- Վիտ առաջնորդող ճամբան փակած են եւ իշխանութիւններուն կողմէ քայլեր պահան- ջած են առեւանգողնե- րը գտնուելու համար:

Այս շաբթ բնակիչ- ները բողոքի ցոյցեր կատարած են շրջանին չէչէնները ամբաստ- նելով նախիրներ գող- ցած ըլլալով եւ անոնց դէմ ինստ միջոցա- ռումներու որդեգրու- մը պահանջելով:

ՄԱՍԹԵՐ ԱՄԼ

ԿԱՐԿԱՆԳԱԿ, ԱՆՈՒՇԵՂԸՆՆԵՐ ԵՒ BÛCHE DE NOËL

ԲԾԱԽՆԳԻՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՄԲ, ՀԱՄԵՂ ԵՒ ՄԻՇՏ ԹԱՐՄ

ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍԻՓԸՐՄԱՐՔԷԹ ՄԱՍԹԵՐ ԱՄԼԵՆ

ԱՐԱ ՊԱՊԵԱՆ ԸԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆ՝ ԲԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 28 Նոյեմբերին ստորագրած է հրամանագիր մը՝ Արա Պապեանը Քանաքատի մէջ Հայաստանի դեսպան նշանակելու մասին (նստավայրը՝ Օթթավա)։

Յայտնենք, որ 1999ի Յունիսէն մինչեւ նոր նշանակումը Արա Պապեան Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբերն ու հասարակութեան հետ համագործակցութեան վարչութեան պետն էր։ Ան կը տիրապետէ անգլերէն, պարսկերէն, ռուսերէն եւ յունարէն լեզուներուն։

Արա Պապեան ծնած է 1961ին, Երեւան։ Աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) արեւելագիտութեան բաժնի մասնաճիւղը եւ ապա նոյն համալսարանէն ստացած է հայ ժողովուրդի պատմութեան ամպլիոնի դոկտորան։ Ուսած է նաեւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան առընթեր դիւանագիտական եւ ապա ՀՊՈՄԻ՝ ՕՍԻՆԻ ռազմագիտական ակադեմիաներուն մէջ։

1981էն 1982 եւ 1984էն 1986 իրրեւ զինուորական թարգմանիչ աշխատած է ԱՖղանիստանի մէջ, իսկ 1989էն 1991 իրրեւ դասախօս պաշտօնավարած է Կիւպրոսի «Մեդիոնեան» կրթական հաստատութեան մէջ։

1992ին սկսած է դիւանագիտական աշխատանքի։ Երած է Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան Միացեալ Նահանգներու, Քանաքատի եւ Իրանի րաժնեմուտքի երկրորդ քարտուղար, իսկ 1992էն 1993՝ Իրանի մէջ Հայաստանի դեսպանութեան երկրորդ քարտուղար։ 1994էն 1995 պետական զանազան կարեւոր պաշտօններ ստանձնած է Իրանի եւ Ռուսաստանի մէջ։

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԶԵՆՆԱՐԿ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄ ԱՌԻՉՐԵՑ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ

Շարաթ, 28 Հոկտեմբերին, Լուս Անճելոսի «Ֆերաս-եան» Ազգային վարժարանի «Աւետիսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Համախարբերդի Հայրենակցական Միութեան տարեկան ճաշկերոյթ - պարահանդէսը։

Միութեան Հիմնադրութեան ճրգ տարեդարձին նուիրուած այս համախմբումին ընթացքին վարչութիւնը պատուեց իր հայրենակիցներէն Կրթ. Ռիչըրտ Յովհաննէսեանը՝ հայ ժողովուրդի պատմութեան եւ Հայ Դատին նուիրուած իր բեղուն աշխատանքին եւ ծառայութեան համար։

Խօսք առաւ Ռ. Յովհաննէսեան, որ թուեց Եւր. Մի. էլ. էլ. ի մէջ կազմակերպուած գիտաժողովներուն շարքը, որոնք յաջողութեամբ իրագործուեցան եւ անդրադարձաւ Հայկական Ցեղասպանութեան բանաձեւին Ամերիկայի նախագահին միջամտութեամբ օրակարգէ դուրս ձգուելուն։

Երեկոյին ընթացքին տեղի ունեցան նաեւ նուիրատուութիւններ, որոնց ընդհանուր գումարը հասան 4800 տոլարի։

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԱՐԱՅԻՆ ՔԱՆԵԱԿ՝ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԷՋ

Նիւ Եորքի «Հայոց Միութեան» նախաձեռնութեամբ ստեղծուած է հայկական լարային քանակը, Յակոբ Լոգեանի (առաջին ջութակ) ղեկավարութեամբ։ Խուճաբին միւս անդամներն են Սըրուէի Փանդիկեան (երկրորդ ջութակ), Սվեթլանա Օզանէսեան (ալթ) եւ Ազապի Պարսամեան (թավուլ)։

Խումբը իր անդրանիկ ելոյթը ունեցաւ Նիւ Եորքի Իրանահայ Միութեան սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ Կոմիտասին նուիրուած երեկոյ, եւ քանակը նուազեց մեծ երաժիշտին ստեղծագործութիւններէն։

Համերկին մասնակցեցան նաեւ Անահիտ Չաքարեան, Վաղարշակ Օհանեան եւ դաշնակահար Գայիանէ Աւագեան։ Ինչպէս նաեւ՝ Բաֆֆի Սվաճեանի ղեկավարած Իրանահայ Միութեան երգչախումբը, որոնք նոյնպէս ներկայացուցին Կոմիտասի ստեղծագործութիւններէն։

Կոմիտասի կեանքին եւ գործունէութեան մասին խօսեցաւ Գրիգոր Ֆիտեճեան։

ԴԱԻԻԹ ԱԼԱՎԵՐԴԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ՆԻԻ ԵՈՐՔԻ ՄԷՋ

«ՏԱՂԱԴԱԽՈՐ ԸԱՅ ՊԱՏԱՆԻՆ ՍՈՑԱՐԹԸ ԿԸ ՅԻՇԵՑՆԷ»

ԿԸ ԳՐԷ «ՆԻԻ ԵՈՐԸ ԹԱՅԱՋ»

Նիւ Եորքի Հայ Օգնութեան Միութեան (ՀՕՄ) մայր մասնաճիւղի կազմակերպչութեամբ տեղւոյն Հայ Կեդրոնին մէջ երիտասարդ դաշնակահար Դաւիթ Ալավերդեան ներկայացուց Պեթհովէնի, Լիսթի, Շոփէնի, Շուսանի, Շուպերթի, Ռափէլի, Սպենդիարեանի եւ Խաչատրեանի գործերէն։ Ներկայ էր նաեւ խմբավար Բաֆֆի Սվաճեան, որ բարձր դնահատեց դաշնակահարին կատարողական արուեստը։

Դաւիթ Ալավերդեան 1996ին ընդունուած է Ճուրջըրտի երաժշտական դպրոցը եւ առաջին տարին բոլորելէ ետք ստացած է 5000 տոլար մրցանակ։ Երկու տարի անց Շոփէնի գործերու կատարումով ան առաջին հանդիսացած է տասը լաւագոյն մեկնաբանողներուն մէջ։

Դաշնակահարին նուազին արձագանգած է տեղւոյն մամուլը, իսկ 1997 թուականին «Նիւ Եորք Թայմս»-ը գրած է. «Տաղանդաւոր հայ պատանին, որ կը նուազէ Նիւ Եորքի մէջ, կը յիշեցնէ փոքրիկ Սոցարթը»։

ՄՆԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ 300ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՎ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ՝ ՀԱՐԻՍԱՅԻ «ՆՈՒՐ ՏԱՄ ՏԻԻ ԼԻՊԱՆ»Ի ՄԷՋ

Արդէն իրողութիւն դարձած Լիբանանի Ազգային նուազախումբի համերգները գրեթէ շարաթական հերթականութեամբ կը շարունակուին երաժշտական թրամ միջոցով ստեղծելով։ Ուրբաթ, 17 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8:30ին, Հարիսայի «Նոր Տամ Տիւ Լիպան»ի մէջ Յարութ Ֆազլեանի խմբավարութեամբ տեղի ունեցած նուազախումբին պաշտօնական ելոյթը աւելի քան տօնական եղաւ նախ այն առումով, որ նուիրուած էր Միւթարեան միաբանութեան 300ամեակին եւ կազմակերպուած՝ նոր հաղորամեակին ընդառաջ, այլ մանաւանդ մենակատարին՝ աշխարհահռչակ երգչուհի Պերճ ժամկոչեանի ողջունելի մասնակցութեամբ։

Արդարեւ, աւելի քան հազար հայ թէ օտար երաժշտասէրներ եւ պաշտօնական հիւրեր սրտանց ողջունեցին նուազախումբին եւ մենակատարին հետաքրքրական յայտագիրին մատուցումը։ Երեկոյն կազմակերպուած էր Միւթարեան միաբանութեան հայրերուն կողմէ. զայն կը հովանաւորէր հանրապետութեան նախագահ գոր. էմիլ Լահուտ, որ կը ներկայացուէր մշակութիւն նախարար Դասան Սալամէի կողմէ։ Իր ներկայացուցիչը յղած էր նաեւ վարչապետ Ռաֆիք Հարիրի։ Միաբանութեան 300ամեակին առիթով իրենց ողջոյնի ուղերձները յղած էին կարտինայ Փոլ Փուլիար եւ Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ճիոզեֆիֆէ Քասսինի։

Պերճ ժամկոչեան երեկոյն բացաւ մատուցելով Պախի «Toccat and Fugue» (ռե. միլոն)։ Ապա յաջորդեց Յրանսիս Փուլէնքի սոլ միլոն երգչուհի քոնչերթով՝ լարային նուազախումբի եւ թիմփանիի համար յօրինուած։ Հպարտօքն յիշելի է, որ Պերճ ժամկոչեան այս երկի ձայնագրումով նուազած է «Կրան փրի սիւ տիսը» Պոսթընի սիմֆոնիք նուազախումբին հետ։ Դասական հանրայայտ

այս երկին յաջորդեց այնքան սպասուած ժամանակակից նոր ստեղծագործութիւն մը՝ Ճէֆրի Պրոտիի երգչուհի եւ նուազախումբի քոնչերթով՝ արժանանալով շատ մեծ ընդունելութեան։ Եւսմաս այս երկին առաջին կատարումն էր Լիբանանի մէջ։ Այս առիթով ուրախանալի է, որ Յարութ Ֆազլեան Լիբանանի սիմֆոնիք նուազախումբին հետ կըրցաւ յաղթահարել նոր երկ մը առաջին անգամ ըմբ հանելու բարդ մարտահրաւէրը։ Իսկ 1995ին յօրինուած, Պերճ ժամկոչեանին ձօնուած եւ Հայոց Երեւնի 80ամեակը խորհրդանշող այս քոնչերթով իր ներքին երեք շերտերով կը խորհրդանշէ հայոց «Փորձութիւն»ը, «Ման»ը եւ «Վերածընունդ»ը։ Ճէֆրի Պրոտի սոյն ստեղծագործութեան մէջ լայնօրէն եւ հիանալի զգացողութեամբ ու ընկալումով օգտագործած է հայկական հինաւուրց խրոխտ պարի եւ նմանեցնող տալ «Յորժամ»ի թեմաները՝ թափանցելով անոնց խորհուրդին եւ ըստ այնմ՝ մշակելով եւ նուազարանային երանգներով հարստացնելով զանոնք։

Պերճ ժամկոչեանի կեանքին եւ ստեղծագործական մեծ վաստակին անդրադարձած էինք անցեալ տարուան լիբանանեան իր համերգաշարին առիթով։ Հոս կը մնայ միայն անգամ մը եւս երախտագիտութեան եւ իր վաստակին առջեւ յարգանքի եւ հիացմունքի խօսք ըսել ու շնորհակտութիւն նաեւ կազմակերպիչն ու կատարողները՝ յիշարժան երաժշտական երեկոյին համար։

Աւարտին Միւթարեան միաբանութեան կողմէ շնորհակալութեան խօսք առաւ Գրիգորիս վարդապետ եւ յուշանուէրով մը պարգևատրեց Պետական երաժշտանոցի տնօրէն դոկտ. Ուալիտ Դոլմիէն՝ իր ցուցարարած գործակցութեան համար։

Զ. Բ.

«ՓԱՐՈՍ» ԵՐԳՉԱՆՈՒՄԻՆ ՀԱՄԵՐԳՆԵՐԸ ԲՐԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ

Հայաստանի «Փարոս» սեփականի երգչախումբը, որ կազմուած է 1988ի երկրաշարժի եւ Արցախի հերոսամարտին ընթացքին հիւանդանոցի մահացածներին հիշատակելու նպատակով ստեղծուած է Միւթարեանի կողմէ, շուրջ 200 հոգի կայացած միջազգային մրցում - փառատօնին։

Փառատօնը տեղի ունեցած է 27 - 30 Հոկտեմբերին, եւ երգչախումբը փառատօնին ընթացքին երաժշտասէր հիւանդանոցի մահացածներին հիշատակելու նպատակով ստեղծուած է Միւթարեանի կողմէ, շուրջ 200 հոգի կայացած միջազգային մրցում - փառատօնին։

Փառատօնը տեղի ունեցած է 27 - 30 Հոկտեմբերին, եւ երգչախումբը փառատօնին ընթացքին երաժշտասէր հիւանդանոցի մահացածներին հիշատակելու նպատակով ստեղծուած է Միւթարեանի կողմէ, շուրջ 200 հոգի կայացած միջազգային մրցում - փառատօնին։

Փառատօնը տեղի ունեցած է 27 - 30 Հոկտեմբերին, եւ երգչախումբը փառատօնին ընթացքին երաժշտասէր հիւանդանոցի մահացածներին հիշատակելու նպատակով ստեղծուած է Միւթարեանի կողմէ, շուրջ 200 հոգի կայացած միջազգային մրցում - փառատօնին։

Փառատօնը տեղի ունեցած է 27 - 30 Հոկտեմբերին, եւ երգչախումբը փառատօնին ընթացքին երաժշտասէր հիւանդանոցի մահացածներին հիշատակելու նպատակով ստեղծուած է Միւթարեանի կողմէ, շուրջ 200 հոգի կայացած միջազգային մրցում - փառատօնին։

Փառատօնը տեղի ունեցած է 27 - 30 Հոկտեմբերին, եւ երգչախումբը փառատօնին ընթացքին երաժշտասէր հիւանդանոցի մահացածներին հիշատակելու նպատակով ստեղծուած է Միւթարեանի կողմէ, շուրջ 200 հոգի կայացած միջազգային մրցում - փառատօնին։

ԱՉՆԱԴՈՒՐ ՀԱՄԵՐԳ ՄԸ ԵՒՍ ԿՈՒ ՏԱՅ Ի ՆՊԱՍՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԲԱՆՈՅՆԵՐՈՒՆ

12 Նոյեմբերին Միշէլ Տրիւբէրի «Վիլմամ Տիման» յայտագիրին ընթացքին Ազնաւուր յայտարարեց, թէ 13 Դեկտեմբերին յաւելեալ համերգ մը պիտի տայ Փայլ տ. Քոնկրէի մէջ՝ ի նպաստ Հայաստանի որբանոցներուն եւ հիւանդանոցներուն։ Ան անդրադարձած է Յրանսիյի Ծերակոյտին կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման եւ մաղթած է, որ Թուրքիա եւս իր արժանապատուութեան համար ճանչնայ իր նախնիներուն գործարած Ցեղասպանութիւնը։

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Չորեքշաբթի, 29 Նոյեմբերին, տեղի ունեցաւ Համազգայինի Լիբանանի Երջանային վարչութեան գրական - գեղարուեստական յանձնախումբին կազմակերպած երեկոյն։ Ն. Փալանճեան ձեմարանի «Վասպուրական» սրահին մէջ կայացած ձեմարանը, որուն ներկայ գտնուեցան զրասէրներ, նուիրուած էր սփիւռքահայ լանաստեղծ եւ արձակագիր Նիկողոս Սարաֆեանի։



Յարութին Քիւրճեան ներկայեցրուց կը փոխաճոց Ն. Սարաֆեանի մասին իր վկայութիւնները։ (Լուսանկարը՝ Պ. ՉԱՐՈՒԿԵԱՆԻ)

Մասնաւորաբար՝ անոր «Միջերկրական» (չափածոյ) եւ «Վեցսեւիկի անտառ» (արձակ) գործերուն։

Հանդիսութեան սկիզբը գրական - գեղարուեստական յանձնախումբին անունով խօսք առաւ Շաղիկ Մկրտիչեան, որ ներկայեցրուց բարի գալուստ եւ գեղարուեստական ըմբռնչում մաղթելէ ետք յայտնեց, որ յանձնախումբը ծրարած է կազմակերպել գրական - մշակութային ձեռնարկներու շարք մը, որոնցմէ առաջինը յատկացուած է Նիկողոս Սարաֆեանի։

Ձեռնարկի ընթացքին Սեղա Քիլիճեան ներկայացուց Նիկողոս Սարաֆեանի մանրամասն կենսագրութիւնը։ «Սփիւռքեան գրականութեան սկզբնական շրջանի սեբունդին ընդմէջէն ծնունդ առաւ հայ ժողովուրդի իմացական ու հոգեկան կեանքը իր ներքին տաղանային մէջ վերլուծօրէն կերտող քերթողը», ըսաւ Ս. Քիլիճեան։

Նիկողոս Սարաֆեան ծնած է 14 Ապրիլ 1902ին՝ Պոլսին Վառնա մեկնող շոգենաւու մը մէջ։ Ընտանիքը հաստատուած է Վառնա։ 1919ին կը վերադառնայ Պոլիս, ուր կ'աշակերտէ Յակոբ Օշականի եւ Վահան Թէքէեանի։ Այդ շրջանին է, որ ի յայտ կու գան ապագայ լանաստեղծին գրական հակումները, որոնք կը քաջալերուին Վահան Թէքէեանի կողմէ։

1923ին աշնան Սարաֆեան կը մեկնի Փարիզ, ուր կ'անցնէ իր կեանքին մնացեալ տարիները։ Օրական ապրուստը կ'ապահովէ աշխատելով ֆրանսական տպարանի մը մէջ։ «Սարաֆեան մարդը ամբն առտու, հազարաւոր աշխատանքներու պէս, դուրս կու գար Վենսիսի իր բնակարանէն, կ'իջնէր միջոց տանող աստիճաններէն վար, մինչ հոգին կը սաւառնէր դէպի հարաւ, դէպի արեւելք, դէպի Միջերկրականի կապտոյ ջուրեր, որոնք բոլորած էին իր ծննդավայրը։ Իր մեծագոյն երգն էր միշտ բնակիլ իր սիրած ծովուն մօտ», ըսաւ Ս. Քիլիճեան եւ աւելցուց. «Նիկողոս Սարաֆեան եղած է ինքնամոփոփ, առանձնութեան սիրահար եւ լուսկեաց մարդ մը, որուն գրիչը չէ դադարած ստեղծագործելէ, նոյնիսկ՝ երբ կեանքի պայմանները եղած են ծանր եւ տագնապալի»։

Սարաֆեանի սիրտը դադարեցաւ բարախելէ 16 Դեկտեմբեր 1972ին՝ հետագայ սերունդներուն կտակելով քերթողագիրներ, վիպական գործեր, նամակներ եւ վերլուծական գրութիւններ, որոնց ամբողջութիւնը տակաւին չէ հրատարակուած»։

Ապա ներկայեցրուց Նիկողոս Սարաֆեանի «Միջերկրական» բանաստեղծութեանն եւ «Վեցսեւիկի անտառ» արձակ գործէն երկարաշունչ հատուածներ, զորս յաջորդաբար արտասանեցին Իրմա Տէտեան եւ Սոնիա Քիլիճեան, եւ որոնց կ'ընկերանային պատշաճ երաժշտութիւն ու համապատասխան ծովային թէ անտառային տեսարաններ պարզող սահիկները։ Բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը եւ սահիկները յաջողեցան «Վասպուրական» սրահը համակել Ն. Սարաֆեանի նկարագրած Միջերկրականի հմայքով ու Վենսիսի անտառին կախարդանքով։

Ձեռնարկին աւարտին խօսք առաւ Անթիլիասի Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակին կողմէ հրատարակուած Նիկողոս Սարաֆեանի գործերուն խմբագիր Յարութին Քիլիճեան։ Ան իր յուշերուն ընդմէջէն ներկայացուց եւ վկայութիւններ տուաւ Նիկողոս Սարաֆեան մարդուն եւ անոր գրական - ստեղծագործական կարողութիւններուն մասին՝ կերտանալով Սարաֆեանի բանաստեղծութիւններուն իր ժամանակաշրջանին համար նորօրինակ մտածումներուն, բառերուն, յանգրուած ու կշռոյթին, «որոնք բոլորն ալ բանաստեղծին քերթողական տաղանդին ու գրեզգայուն հոգիին արտայայտութիւններն են։

«Անոր ստեղծուած շարունակութիւնը կը ցոլացնեն շարժումի փիլիսոփայութիւնը եւ անոր ընդմէջէն բացուելու, աշխարհը իւրացնելու եւ անոր մէջ մերուելու եւ զայն նուաճելու միտումը»։

Յարութին Քիլիճեան կերտուած ի մասնաւորի Սարաֆեանի «Յուլիս 14» ոտանաւորին վրայ եւ Սարաֆեանի այլ գործերուն կողքին, ներկայացուց նաեւ անոր գործին վերլուծումը։

Ձեռնարկին աւարտին վաճառուեցան Նիկողոս Սարաֆեանի «Չափածոյ երկեր»ը, հրատարակութիւն Գէորգ Մելիտինեցի գրական մրցանակին։

Ս.Ե.Ս. ՊԱՐԱՇԱՆԴԵՍ Պ. Ս.

Ժողովրդային, աշուղական եւ յեղափոխական երգերու ձոխ յայտագիրով

Մասնակցութեամբ՝
Դանրայայտ սիրուած երգիչ՝
ՓՈԼ ՊԱՂՏԱՏԵԱՆԻ
Կազմակերպութեամբ՝
ՍԵՄԻ ՊԱՏԱՆԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

•Տեղի կ'ունենայ Կիրակի 3 Եւ Ուրբաթ 8 Դեկտեմբեր 2000ի երեկոյեան, Ա. Ս. Ժ. Տաճ «Անի» ձաշարահէն Գերս։

•Տոմսերը ապահովելու համար կրնաք դիմել Ա. Ս. Ժ. Տաճ, Հեռ. - 4641881 - 4463902

ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐՈՒՆ ՄԻՋՈՑՈՎ

ԻՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԸԱՅՎԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐԻՆԱԳԻԾ

Իրանի «Լինթեխայ» օրաթերթի Ջորջջարթի, 29 նոյեմբերի թիվին մէջ լոյս տեսած լրատուումներն են հարցազրույցի մը համաձայն, Իրանի խորհրդարանին մէջ սկսած է մշակուելի Հայկական Յեղասպանութեան ճանաչման բանաձեւ մը, հայ պատգամաւորներուն ճիշդերով:

Թերթը լուրը կը հարցոյցէ «Իրանի խորհրդարանը պիտի քննարկէ թուրքի մէջ իրագործուած Հայկական Ցեղասպանութեան մասին անարդար և անարդարաբան իրադրութիւնը»:

Իրանահայ պատգամաւորը նոյն թերթին յայտարարած է նաեւ, թէ «Վերջերս, աշխարհի որոշ երկրներ, յանձինս Ֆրանսայի եւ Իտալիոյ, իրենց խորհրդարաններուն մէջ պաշտօնապէս ճանաչած են այս Ցեղասպանութիւնը եւ մենք Իրանի Խորհրդարանի պատգամաւորներէն կ'ուզենք, որ Ցեղասպանութիւնը պաշտօնապէս ճանաչուի և որ Ցեղասպանութեան զոհերը ճիշդ ճանաչուին»:

Թերթին եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւորը բանաձեւին յաջողութեան մասին ըսած է. «Իմ կարծիքովս, խորհրդարանի այս նրատաշխատանքն է հաւանականութեամբ կը հաստատուի նման նախագիծ մը, եւ մենք յոյսով ենք, որ այլ պատգամաւորներու հետ միասնաբար կը դատապարտենք Թուրքիոյ կառավարութեան»:

Ցիւցնենք, որ ընթացիկ տարուան 24 Ապրիլին, իրանահայերու կողմէ կազմակերպուած ըողոքի ցույցին ընթացքին, ցուցարարները պահանջած էին, որ Թուրքիոյ կառավարութիւնը ընդունի Հայկական Ցեղասպանութեան պատգամաւորներու լուծարումը եւ վերջ տայ Հայկական պատմական եւ կրօնական կոթողներու ակերման:

ԻՐԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ ԾԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի, 27 նոյեմբերին Թեհրանի Հայոց թեմական խորհուրդի, Հայ Դատի Յանձնախումբի, «Ալիք» օրաթերթի եւ միութիւններու ներկայացուցիչներէ բաղկացած պատուիրակութիւն մը այցելութիւն տուաւ Թեհրանի մէջ Ֆրանսայի դեսպանատուն եւ իրանահայութեան անուանով երախտագիտութիւն յայտնեց Ֆրանսայի Ծերակայտի կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման առիթով:

Դեսպանը հանդիպումին առիթով շնորհակալութիւն յայտնեց հիւրերուն՝ տրուած այցելութեան եւ նոյն առիթով ստացուած անակնկալ եւ ծաղիկներով հարգանքներուն համար: Դեսպանը արեւելոց, թէ ինք ծանօթ է հայութեան՝ դիւանագիտական իր ասպարէզին բերումով: Նշեմք, որ Իտալիոյ խորհրդարանին կողմէ Ցեղասպանութեան ճանաչման առիթով եւս շնորհատրական բազմաթիւ անակնկալներ լղուեցան Իրանի մէջ Իտալիոյ դեսպանատուն:

ՎԿԱՆ ՀԱՍՏԱՏԵՑ ԿԱՇԱՌՔ ՏԱԼՈՒ ՓԱՍՏԸ

Երեւանի Կեդրոն եւ Նորք - Մարաշ համալսարաններու տաղանի ատենադիւանի մէջ 28 նոյեմբերին Աշակուղեցու Վալերի Պրիստի անուան օտար լեզուներու հիմնարկի դասախօս, այս տարուան ընդունելութեան քննութիւններու գերմաներէն լեզուի յանձնախումբի նախագահ Սարգիս Ծահմուրադեանի դատաւարութիւնը:

Վերջինս կը մեղադրուի 10,000 տոլար կաշառք վերցնելու յանցանքով:

Հրաշ Սուքիասեան դատաւարութեան ընթացքին վկայութիւն տուաւ: Ան խոստովանեցաւ, որ իր գաւազին՝ Տիգրան Սուքիասեանին գերմաներէն լեզուի քննութեան յաջող միջ տալու համար 10,000 տոլար կաշառք տուած է Ծահմուրադեանին: Սակայն անի ուշ վերջինս Սուքիասեանին յայտնած է, որ իր գաւազը գերտ ստացած է եւ ինք ոչինչով կրճալ օգնել ու խոստացած է վերադարձնել գումարը:

Վկան Արշէ, որ Ծահմուրադեանին կաշառք տալու մասին ինք անի ուշ տեղեկացուցած է իրաւապահ մարմիններուն:

ՔԱՉԱՐԱՆԻ ՓԱՊՈՒՂԻՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄԷՋ

